

ՀԱՍՑԻ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie, S. Bulbulian (Egypte) LE CAIRE

Directeur EGHICHÉ TOROSSIAN

Ծանուցումներ մասնաւոր պայմաններով կ'ընդունուին .

Ձեռագիրները եւ չին տուիր :

ԱՐՇԱԼՈՅՑ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱՐԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒՄ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳՎՈՐՈՒԹԻՒՆ

1914

ՆԳՆՊՑՈՍ

Տարեկան 40 ԵՂ. ԵՂ

Վեցամսայ 20

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 12 ԵՂ

Ապագիկ բաժանորդագրութիւն չի' ընդունուիր :

ՏՆՕՐԷՆԻ - ԽՄԱՎԻՐ ԵՂԻՇԷ ԲՈՐՈՍՅԱՆ Արտակալ եզրկարգի կառավարութիւն ԱՂԳՈՒԹԻՒՆ ԳՐԱՎՈՐՈՒՄ ԵՂ. ԳՐԱՎՈՐՈՒՄ ԵՂ. ԳՐԱՎՈՐՈՒՄ ԵՂ.

ՅՈՒՇԱՐՁԱՆ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

Նախորդ թուով Հանգոցեայ Վսեմ. Նուպար փաշայի լուսանկարը հրատարակելու առթիւ . զգուցուցած էինք թէ՛ հետզհետէ լուսաշաղոյս ի մէջ երևնալիս լուսանկարներու կենսագրականներու հրատարակութիւնները տեղի չ'պիտի ունենան, անոնք զատ գրքի մէջ ամփոփելու նպատակին վերայ հուած ըլլալուն համար :

Բայց Յուշարձանը՝ որ մեծագոյն մասամբ եզրկարգի հիացողներու նուիրաբերութիւններով կառուցուած է, կ'արժէ որ անոր համար բացառութիւն մը ընենք, այս թուով քանի մը համառօտ ծանօթութիւններ տալով անոր մասին :

1903ին, Աղեքսանդրիոյ Թագապետական Խորհրդոյն նախագահ Տօքթօր Շիյը պէյին, որ յետոյ փաշայութեան աստիճանին բարձրացաւ և այժմ հանգուցեայ է, նախագահութեան ներքէ՛ Հանգանակիչ մասնախումբ մը կազմուեցաւ, Եզրկարգի ժողովուրդին սէրը, համակրանքը և երախտագիտութիւնը առ Նուպար փաշա, հնչուն կիրպով արտայայտելու համար ժողովրդային հանգանակութեամբ Յուշարձան մը կանգնելու նպատակաւ :

1904 Յունիս 3 ի Ուրբաթ օրը կատարուեցաւ բացումը, կրանիթեայ բարձրադիր պատուանդանի մը վրայ զետեղուած Պ. Տընի Բիէշի այդ պղնձեայ հրաշակերտին, Աղեքսանդրիոյ Ռիւ տ'Ալլեմաններէ գալարագեղ պարտէզներուն մէջ :

Թերթիս այն ատենուան և արդի Տնօրէնը՝ Տիար Եղիշէ Թորոսեան՝ Մասնախումբի նախագահին կողմէ Յուշարձանի բացման հանգանակներուն յատկապէս հրաւիրուած ըլլալով, ներկայ եղած և Գահիրէ վերագարձին ծրագրած և պատրաստած էր ի տպագրութիւն « Յիշատակարան Նուշար փաշայի » տիտղոսով գրքի մը :

Ասոր առաջին տպագրութեան արդիւնքը Հեղինակէն նուիրուեցաւ Գահիրէի Աղքատախնամ Ընկերութեան, ուրկէ բաւականէն աւելի



ՅՈՒՇԱՐՁԱՆ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ. ԱՂԷՔՍԱՆԴՐԻՍ՝ ՌԻՒ Տ'ԱԼԸՄԱՆԵՐ

կողիկ հասոյթ մը քաղեց նոյն Ընկերութիւնը, ի բաց առեալ բարեխղճօրէն իւրացնելը՝ հեղինակին արգար իրաւունքն եղող կարգ մը նւերներ, որ երկու երեք կարևոր անձնաւորութիւններու կողմէ զըրկուած պիտի ըլլային . . .

Թէպէտև այդ աշխատութեան աւելի ընդարձակ և երկրորդ տրպագրութիւնը կատարելու իրաւունքն ալ ստացած էր Հեղինակը Ն. Վ. Պողոս փաշային դիմելով, սակայն չարամիտ և վատբարոյ նախանձորդներու կողմէ զանազան ձևերու տակ սագրուած ոճրագար և թաքուն մեքենայութիւններ, և

նրբահնար դաւադրութիւններ և ոճիւրդ գերազանցող հակամարտութիւններ արգելք եղան անոր հրատարակութիւնը կատարուելու և մինչև ցարդ անգործագրելի կը մնայ այն, 3 — 400 էջերու մօտեցող ձեռագիրները պատրաստ ըլլալով հանդերձ :

Հիմայ՝ որ արդի նկատելի պարագաներուն բերմամբ՝ առիթ կը ներկայանայ ներկայ թուով հրատարակութեան տալու « Յուշարձանին » լուսանկարը, հարկ անհրաժեշտ կը դառնայ այդ օրերէն վեր-

յուշում մը ընել, հրատարակութեան տալով Հանգանակիչ Մասնախումբի նախագահին գրուածական ճառը, որ հանգուցեայ պետական Մեծ գէմքին իրական արժանիքները և անմահ հանճարը կը ցօլայնէ իր մէջ :

Պէտք է ըսել թէ՛ Յուշարձանի բայման հանգանակներուն ատենախօսեցին նաև Ն. Ն. Վ. Վ. Մուսթաֆա փաշա Տէհմի, այն ատենուան նախարարապետը, որ Նորին Բարձրութիւն Խտիվը — արդի Օգոստոսիա Վեհապետը — կը ներկայացրնէր, Աղեքսանդրիոյ կառավարիչ Մահմուտ փաշա Սըտգի և Խառըն Դատարանաց Վերաքննիչ ատենին նախագահ Պ. տը Գօրիցմիչ :

Ահաւասիկ Տր. Շիյը փաշային ատենախօսութիւնը :

Վսեմաշուք Տիարը, Տիկնայք եւ Պարոնայք

Նուպար Բաշայի բազմաթիւ հիացողները՝ եւ Եզրկարգի ինչպէս նաև Եւրոպայի մէջ ունեցած բարեկամները, մտածեցին որ իր յիշատակին կանգնուած յիշատակարան մը ամենուէն մտքին մէջ պէտք էր կենդանի պահէր Եզրկարգի պատմութեան մէջ կատարած դերը եւ մատուցած նշանաւոր ծառայութիւնները : Այս եղաւ նպատակը այն Յանձնաժողովին, որուն նախագահութիւնը ինձ յանձնելու պատիւն ինձ ըրին. եւ ան այդ իրաւունքով է որ թողտուութիւն կը ինդերմ ձեռքէ՛ զինքը չ'ճանչցողներուն համար քանի մը խօսքով յիշեցնելու թէ՛ ինչ եղաւ Նուպար Բաշա եւ ինչ եղաւ Եզրկարգի այս գեղեցիկ երկրին մէջ իր կատարած գործը :

1844ին, իր պաշտօնավարութեան սկսելէն մինչև 1894 ի իր վերջին նախարարապետութիւնը, կէս դարու այդ ամբողջ ժամանակամիջոցին, այլազան պաշտօններ վարեց՝ սկզբնաւորութեան ատենները՝ Մուհամմէտ Ալի բաշա Փոխարքային երկրորդ քարտուղարի համար պաշտօնէն սկսեալ մինչև նախարարաց խորհրդոյ նախագահութիւնը զոր տասը տարի առաջ վերջին անգամ ըլլալով յանձնեց իրեն Ն. Բ. Ստիվին վստահութիւնը : Հետզհետէ եղաւ Վիեննայի եւ Պէրլինի մէջ կառավարութեան ներկայացուցիչ, Առողջապահական պաշտօնէութեանց Պետ, մաքսի (transit) եւ երկաթուղիներու Տնօրէն, Առևտրական, Արդարութեան, Արտաքին գործոց նախարար եւ նախարարաց խորհրդոյ նախագահ եւ այսչափ պէսպէս հանգա-

մանքն եր ունեցող այդ բոլոր պաշտօն- ներուն մէջ՝ չ'կայ բնաւ պաշտօն մը, յորում իր գործունէութեան խորունկ հետքը թողուցած չ'ըլլայ:

Հրաշալի յայտնատեսութեամբ եւ իւրացուցման տաղանդով օժտուած, միակ փայլակնանման ակնարկով մը գի- տէր ըմբռնել ամէն բանի տկար կողմե- րը եւ թերութիւնները, եւ՝ դարմանը առժամայն յայտնի կ'երեւէր իր աչքե- րուն այնպիսի պայծառասիրութեամբ մը եւ յստակամտութեամբ մը որ իրեն մէջ ձիւրք մըն էին եւ ոյ՛ մը: Աշխատու- թեան մէջ ետանդուն եւ յամառ, իր բու- լոր ձեռնարկներուն մէջ անզուպ ուժ- գընութիւն մը գործածող, չ'եղաւ եր- բէք որ մարմնաւոր կամ մտաւոր ամենա- փոքր հանգիստը վայելել ուզէր՝ մինչեւ որ հասնէր իր առաջադրած նպատակին: Իր բանակցութեանց մէջ համոզման տա- ղանդ մը ի յայտ կը բերէր եւ անոր օ- ժանդակ՝ հաւանեցուցման գործութիւն մը եւ պերճախօսութիւն մը՝ որոնք այն- չափ յանկուցիչ էին որ ամենէն կան- խապաշարուած միտքն անգամ չէր կա- բող անոնց դիմադրել:

Ահա այսպէս յաջողեցաւ այն ամե- նափափուկ պաշտօններուն մէջ զոր ի- բեն յաջորդական վեհապետները իրեն յանձնեցին, ահա այսպէս Ապպաս բաշա- փոխարքային կողմանէ բանակցելով յա- ջողութեան հասցուց Եգիպտոսի մէջ ա- ռաջին երկաթուղոյ շինութիւնը՝ որուն գաղափարը ինքը թելադրած էր, եւ ա՛յսպէս ձեռք բերաւ 1866 ի եւ 1867 ի Ֆէրմանները՝ որոնք ուղղակի յաջոր- դութեան հրամանը եւ իտիվի տիտղոսը կը շնորհէին Ն. Բ. Իսմայիլ բաշայի եւ ասկէջ զատ կ'արտօնէին անոր ներքին կազմակերպութեան կանոններ հաստա- տել եւ մ. քառային թղթատարական եւ այլ պայմանագրութիւններ կ'ընէր, ո- ռով իրօք Եգիպտոս կ'ստանար վարչա- կան ինքնօրինութիւն:

Դարձեալ ինքը եղաւ որ 1864 ին Բարիզի մէջ Սուէիչի Ընկերութեան հետ ունեցաւ յոգնաշան եւ փափուկ բա- նակցութիւններ, որոնց արդիւնքը ե- ղաւ չահեցնել Եգիպտոսի բան մը որ ա- մենէն աւելի մեծ փափաքն էր եգիպտո- սի:

կան կառավարութեան, այն է բարձու- մը տարապարհակ աշխատութեան՝ զոր Ջրանցքին ընկերութիւնը մինչեւ այն ատեն հարկադրած էր եւ որուն բեռը այնչափ տաժանելի կերպով կը ծանրա- նար ընկերներուն վրայ:

Այնուհետեւ եկաւ իր ասպարէզին ամենէն կարեւոր եւ ամենէն արդիւնա- ռոր գործը այն գործը զոր յղացած էր ինքը արդարութեան բաղձանքէն առաջ- նորդուած, կ'ուզէր ըսել դատական բա- րենորդութիւնը:

Այդ իրագործելու համար, պարտա- ռորեցաւ բանակցութեան մտնել Եւրո- պայի զանազան կառավարութեանց հետ հետզհետէ այցելելով բոլոր մայրաքա- ղաքները, կանխապաշարեալ եւ հակե- ռակորդ մտքերու դէմ մաքառելով, մի- ջազգային յանձնաժողովներու նախագա- հելով, վերջապէս ինքզինքը թիւրապատ կելով եւ այնպիսի անսահման ջանք մը ի գործ դնելով՝ որուն ընդունակ էր իր հուժկու կամքը միայն: Եւ տասը տար- ուան յամառ աշխատութենէ մը վերջը միայն՝ իր ձեռք առած գործին արդա- րութեան վրայ ունեցած հաւատարմութե- ամբարանութեամբ, վերջապէս ուրախու- թիւնը վայելեց իր ջանքերը յաջողու- թեամբ պսակուած տեսնելու, խառն դա- տարանները հաստատուեցան 1876 Փե- տրուար 1 ին:

Այս հաստատման յառաջ բերած ար- ղիւնքին ո՛րչափ մեծ ըլլալուն վերա- հասու ըլլալու համար, պէտք է որ մարդ ճանչցած ըլլայ Եգիպտոսը, իսպն զա- տարանաց հաստատութենէն առաջ եւ ա- կանատես եղած ըլլայ՝ մեր մէջէն չա- տերուն նման՝ այն դոկտորին որ կը տիրէր այն ժամանակ դատարաններու տարապայման բազմութեան պատճառաւ:

Իտիվ Իսմայիլ բաշայի եւ իր նա- խարարին փառքը պիտի մնայ միշտ դա- տական բարենորոգմամբ իրաց այդ վի- ճակին վերջ մը տալու գործը:

Այդչափ ազգամարդին կեանքի մը վրայ արագ տեսութիւն մը իսկ թերի պիտի ըլլար, եթէ չ'յիշատակէի թէ ինչ սաստիկ հոգածութիւն ցոյց կուտար Նուպար բաշա երկրագործութեան վե- րաբերեալ ամէն գործերու, որոնց յա- ռաջիմութեան հետամուտ եղաւ անդա- ղար:

զար եւ հիթէ չ'յիշէի թէ ի՛նչ խանդա- վառութեամբ ընդունեցաւ եւ քաջալե- րեց բոլոր ուժովը, ջուրերու բարեօք կիրարկման եւ Նեղոսի ջրամբարներուն համար ճարտարագէտ շինողներու յղա- ցած հրաշալի ծրագրերը:

Մեր մէջէն քանինք քանի՞ քանի անգամ լսած են իր բերնէն սա խօսքը որ՝ իր ճշգրտութեամբ՝ իր մտածումը կը թարգմանէր եւ ամբողջ ծրագիր մը կը բովանդակէր. «Տուէ՛ք, կ'ըսէր, սուէ՛ք Եգիպտոսի ջուր եւ արդարու- թիւն, եւ երկիրը երջանիկ եւ բարգա- լաւ կ'ըլլայ»:

Այդ կրկին բաղձանքին հասած ենք այսօր: Արդարութեան յետոյ՝ կը մնար աւելի առատօրէն ջուր մատակարարել հողագործութեան, եւ սե՛ս ինչ որ վեր- ջերս իրագործուեցաւ Ասուանի հրաշա- կերտ Ջրամբարին շինութեամբը, իր մե- ծութեամբը միակ գործ աշխարհիս վրայ, որով Բ. Իտիվին կառավարութիւնը օժ- տեց երախտապարտ Եգիպտոսը եւ որ ցոյց տուաւ երկրին բարգաւաճութեան աննախընթաց անզուգական աստիճան մը, որուն ականատես կ'ըլլանք սքան- չացմամբ:

Ահա լայն գիծերով եւ վեր ի վերոյ ամփոփեցի Նուպար բաշայի ասպարէզին ամենէն աչքի գարնող գործերը. այս արագ յիշատակութիւնները ցոյց պիտի տան այն ծառայութեանց կարեւորու- թիւնը, զոր պետական մարդը մատոյց իր երկրին՝ կ'էս դարէն աւելի ժամանա- կամ ջոցին մէջ այնչափ փրկաւէտ ազդե- ցութիւն մը գործելով Եգիպտոսի վրայ: Ինչ որ կ'իշխէ իր գործին մէջ՝ ամենէն առաջ իր երկրին եւ Ֆէլլաին համար ունեցած խորին սէրն է եւ որ եւ է անի- բաւութեան նկատմամբ իր զգացած ըմ- բոստացման բնազդական զգացումը. ա- հա ատոնցով Ներշնչուած կը տեսնենք իր բոլոր գործերը, թէ՛ երբ կը ջանար ջնջել տարապարհակ աշխատութիւննե- րը, թէ՛ երբ անխնայ կ'աշխատէր ձեռք բերելու համար այն ինչ որուն՝ իրեն կարծիքով՝ երկիրը ամենէն աւելի պէտք ունէր. «Ապահովութիւն Արդա- րութեան միջոցաւ, — այն արդարու- թիւնը առանց որուն կ'ըսէր, կառավա- ղար»:

րութիւն կարելի չէ՛: Ահա այսպիսի է Նուպար բաշայի գործը. այդ գործը այ- ժմ կը վերաբերի պատմութեան. անոր մէջ արձանագրուած պիտի մնայ գեղե- ցիկ էջով մը՝ զոր նոր սերունդները պի- տի կարգան միշտ շնորհապարտ եւ յար- զալից սրտով:

Այլեւս միայն կը մնայ ինձ, վսե- մաշուք Տիարք, Տիկնայք եւ Պարոնայք, Յանձնաժողովիս կողմանէ մեր ամենա- յարգալից երախտագիտութիւնը մատու- ցանել Բ. Իտիվին, որ բարեհաճեցաւ իր ամենաբարձր աջակցութիւնը շնորհել մեզ եւ այսպէս մեր յաջողութիւնը ա- պահովել:

Նմանապէս շնորհակալ եմ Ն. Բարձ- րապատմութեան կառավարութեան որ իր ներկայացուցիչներով մասնակցե- ցաւ իրենց վաղեմի ընկերոջ եւ աշխա- տակցին մատուցուած յարգանքին:

Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ի Թ Ի Ի Ն

«Արշալոյս» յի ամբողջ Ռուսա- նիոյ գործակալութիւնը ստանձնած է Տիար Կ. Փիլիպպոսեան, որուն պէտք է դիմել թերթին վերաբեր- եալ ամէն գործերու համար:

Մեր գործակալին հասցէն է, Mr. G. B. Pilibossian F. American 83 St. Mangalia (Roumanie) Constantza

Նորնպէս Արարկիբի գործակալն է Տիար Միսաք Ա. Սուրբան, ո- ռուն պէտք է դիմել թերթին վե- րաբերեալ բոլոր գործերու համար:

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՎԼՈՅՍԻ

ԳՈՂԻՆ ԳՈՂ ՈՒ ԿԵՍ

(Շար. Նախորդ թիւէն.)

ամբողջ ամսականիդ պէտք ունիս ինք- ղինքդ, կինդ եւ զաւակներդ քաղցէ եւ ցուրտէ չ'մեղքնելու համար: Այսու հանդերձ, ամեն ամիս խաղին տուրք մը վճարելու միջոցը կը գտնես: Դուն, պարոն, որ եթէ քիչ մը եւս յարուսա- կես, մօրուքը քու ձեռքերովդ փետած պիտի ըլլաս, քիչ մը աւելի չահելով, մեր բարեկամին չափ բազմամիզամ ըն- տանիքի մը հոգն ունիս եւ քիչ մը ա- լելի գուժար կը նուիրես խաղաթղթեր շօշափելու հաճոյքին: Դուն, ակնոցազէն պարոն, անոնցմէ նուազ կը չահիս, եւ ի փոխարէն պատու եւ միշտ հիւանդ մայր մը ունիս, որ բժշկական յարա- տես խնամքներու, նաեւ դեղերու պէտք ունի: Բայց եւ այնպէս, դուն ալ նուազ չ'տայ չես բազմախաղերու մէջ: Դուն, պարոն, որ վերջն ի վերջոյ մատերդ պի- տի յօդատես, դուն ալ առանց աւելի վաստակ մը ունենալու, այրի քրոջ մը եւ հօրէզուրկ երկու ջեռորդիներու վը- րայ խնայողութիւն ընելով, կը խա- ղաս եւ կը կորսնցնես ամենայն կանո- նաւորութեամբ: Իսկ դուն, պարոն, որ ձեռքունը մողէզ կամ ջղջիկ, ապահովա-

պէս ո՛չ Մուսա, փնտրելու կեցուածքն ունիս, դուն ամենէն աւելի կը չահիս, եւ քու խնամքիդ կարօտ ոչ ոք ունիս, ի բաց առեալ կիսաւեր անձը, որ՝ եթէ չ'էս սխալի՛ր՝ ութը, տասը հոգիներ ըն- տանիքի մը ծախսը կը պահանջէ ամե- նայն խտութեամբ, քեզ քիչ մը աւելի կանկուռ պահելու համար արեւուն տակ բայց դուն ալ ամէն նկատում կը զոհես «պանոց» գոջելու հրճուանքին, թէեւ այդ հրճուանքը քու գրպաններդ կը պարպէ: Կը մնայ նուաստս: Թերեւս դուք կ'անդիտէք, բայց անա կը յայ- տարարեմ որ իմ ամսանասոյթս յիսուն, վաթսուուն ոսկիի պատկանելի գուժարին կը հասնի, եւ անձէս դուրս ազգակա- նական մի որ եւ է կապ չունենալու առաւելութեան կը յաւելում երկաթիայ առողջութեան մը անարհամարելի շնոր- հը: Եւ եթէ, երբեմն թերթերու կամ եկողի գացողներու միջոցաւ բնագաւա- ռին հացակարօտ որբերուն եւ այրինե- րուն լուրերն առնելով, կամ մի որ եւ է անկիւն կծկտած չքուորի մը երկնցած ձեռքը տեսնելով սրտիս մէջ հրաշքի եր- կաթի մը միտուելու պէս բան մը չ'զգա- յի, ինքզինքս աշխարհիս երջանկագոյն արարածը պիտի նկատէի, հակառակ որ ես ալ, ամսոյն կէսը չ'հղած, վերջը չունանով քաշելու հարկին մէջ կը գըտ- նուեմ միշտ, ճիշդ ձեզի պէս: Ի՞նչ ը- սել ուզեցի այս երկարաշունչ չաղփաղ- փութիւնով: Ըսել ուզեցի որ զեղծա- րարներ ենք մենք ամենքնիս ալ, վա-

սընդի բուն իրենց նպատակին չենք յատկացներ մեր վաստակները: Այս կէ- տին վրայ համամիտ էք ինձի:

— Թէպէտ զեղծարար բառը ծանր- կեկ է, բայց պատճառաբանութիւնդ ի- բրաւացի կ'երեւայ, պատասխանեց ակնու- ցաւորը, մինչդեռ միւս չորս երեւելի- ները լուռ կը մնային:

— Արդ, շարայարեց այն որ մը- րափած էր, կրնա՞ք փաստել որ զեղ- ձարարութիւնը անբարոյականութիւն չ'ըլլար:

Այս անգամ պատասխանող չ'զըտ- նուեցաւ:

— Լուռութիւնը խոստովանութիւն է կըսէ թրքական առած մը: Հետեւաբար քանի որ կրցայ ապացուցանել ամբաս- տանագրոյս մէկ կէտը, կը ձեռնարկեմ միւս կէտին ալ ճշգրտմին: Սա այստա- րոյ աղջիկը, իր — թէպէտ անօրակելի միջոցներով — ամբողջ չահածը, իր ըն- տանիքին բարօրութեան յատկացնելով, իրաւունք չունի՞ անաչառ եւ երեւոյ- թէն չ'զատող ձեռքերու համար՝ մեզի եւ մեր նմաններուն գերազատելու:

— Ծիշդ է, ըսաւ մօրուսաւորը, հազիւ լսուելի ձայնով մը:

— Թէեւ կիսամեռ, բայց եւ այն- պէս այս պատասխանն ալ կը բաւէ զիս արդարացնելու: Ուստի, երկու բառով մեր այս ինկածութեան պատճառը փըն- տըռնք, որպէս զի կարող ըլլանք դար- ման մը խորհիլ. եթէ հնարաւոր է, Տեսնենք, ուրեմն: Անզգայ ենք թէ

չար: Ես կըսեմ, ո՛չ մին, եւ ո՛չ միւ- սը: Մեր զաւակներուն, կիներուն, ծնողներուն կամ հանդիպուած մուրա- ցիկներուն թախանձանքէն զլիսկոր կամ զայրացկոտ հեռացումը արդէն փաստ մըն է որ մեր սիրտը մեր հոգիին հետ կա- պակցութեան զուրկ չէ բոլորովին, բան մը որ անզգայութեան պաղափարը կը հերքէ:

Իսկ զալով չարութեան, նոյնիսկ այն — թէպէտ կիսատ — հոգը, զոր ու- նինք մեր արեւակիցներուն եւ ընտանե- կաց անդամներուն համար, նշան մըն է որ ո՛չ թէ չար՝ ալ նուազ բարի ենք: Բայց ինչո՞ւ: Որովհետեւ, այս կամ այն կերպով մեր սրտին վրայ տիրա- պետող կիրքը մեր իսկ թոյնտուութեամբ այնքան զորսցած է որ, ալ մեր ա- զատութիւնը կապտած եւ մեզ իր անու- դոք կամքին գեանասող նպատակներն ըլլած է:

Կրցա՞յ հասկցնել:

— Եզրակացութիւնդ ճիշդ է, պա- տասխանեցին ընկերները միմայն:

— Ախտորոշութեանդ ըսելիք չ'կայ, ըսաւ ընչացոլորտը, բայց դարմանը՝...

— Հիմայ անոր պիտի գանք, շա- րայարեց այն որ մրափած էր:

Այդ դարմանը պիտի գտնենք նոյն իսկ մեր զահեմներուն քով: Պիտի բը- ժըչկուելիք ճիշդ անոնց միջոցաւ, որոնք մեր քսակները կը պարպեն, մեր խերը կ'անիծեն:

Ունկնդիրները հետաքրքիր աչքեր նետեցին բանախօսին վրայ:

ՅՕՐՕ ԷԿԼՕՆ

ՇԱՐԱ ՊԵՅԵ ԷԼ ԵՆԷՏԵՅԵ
Փարսէի վաճառատան դիմաց
Քարթ Բոստալ Լուսանկարներուն
տուգինան 10 դրուչէն .
Ե Ա Պ Է Լ Է Շ . . .
ՄԱՆՕՔՈՒԹԻՒՆ .— Սփեհք Տարե-
ցոյց - Ուղեցոյցին վերաբերող մանկա
կան բաժնի լուսանկարներուն համար
քառորդ տուգինը 5 դր . ողջի սակար-
կուած է , փափաքողները կրնան դիմել
մինչեւ Մայիս 1 ր : Անոնք որ կուշանան
կը զրկուին :

ՀԱԿՈՒՄ

- Այս գիշեր՝
Ան քնած էր քունն անխորով
Լուս գիշերով ,
Ես միևնչիտ՝
Հեզ մեկտուր , մեկտակս զոգ ,
Օրսամուրնո՛վ
Հրակեցի .
Ու քաղիմներն իմ նոր կեանքիս
Կրկին , կրկին
Գրկեցի .
Մեկտակս մը քառուսուրիս
Մեջը շոյն
Մեկտակս՛
Եղայ վրջիս միևնչիտ անտու
Մաղմուկեցու
Անողո՛վ .
Ունայնուրեան քաղիմ անայ
Լայնասուս
Ինկայ ես ,
Մանուան հով մը մէջ իր վագիմ
Անցաւ ուղիս
Վրայէս ,
Ու տեսայ որ , քաղիմն , այդ գահ ,
Լուսին խաղաղ ,
Այնկո՛ծ
Ծով մ'եր դարձեր , ու ես ինկեր
Անո՛վ , անե՛ր
Մէջ իր ծոց .

- Մարտիս մէջ մանասարտոն
Ձեռք մը անուր՝
Օձիքիս
Փակաւ ուժով , մուրիմ խարխար
Դեպի ծովափ
Քաշեց զիս .
Վրջի քաղիմն էի առջեր
Ես հեր ի հեր
Տարածուեր ,
Լաշկան կիներ ինձ ցոյց կուտան
Շուրջս անէն քան
Քանդ , աւեր .
Հոգիս սխրած , ես կը դառնամ
Ա՛յ այս անգամ՝
Վիրխարի
Ուրիշ քաղիմ մ' առջեր , քաղիմ՝
Մեծ ձանձորոյիս
Աշխարհի .
Հրակայ միտս մ' է գլխուս կայս
Որ աչ ու ձայն
Գայնոյով ,
Ձեռքիս մէջի իտերն անրոյց
Ժիր , անդողոյց
Ձարդ սաղով .
Դարձայ , դարձայ , գայցն անտու
Շիրմանման
Իմ մեկտակս ,
Անայնուրիս , ձանձորոյ ու վիշտ
Գայն ես միշտ ,
Յուսեա՛մն .
Յոգնած գլխուս հազար դրած
Լայնասարած
Քարտուս .
Ճարձասիւն մը արքեցոյց զիս
Մէջ քրմարիս
Մարտուս .
Արշալոյսն շող մ'եր պզտիկ
Ճեղքէ մ' յուշիկ
Ցայտն անու .
Դող մը անցաւ մարմնէս եղեզ ,
Եւ անարեկ
Հեզ քիթերս՝
Տեսան հեռուն , անկիւն մը խոր
Կտր , կտր
Ձերք շարսիս՝
Հեզ քաղիմը իմ հեզ արսիս ,
Կեանքս , հոգիս ,
Օքսու անու՛ր .
Եւ այդ պահուն՝ ես կարծեցի
Նուրք . կանաչի
Ձայն մ'անուշ՝
Լքելի հեռուէն , ծիծաղ մ' հեռոյ .
Միտքս ձայնով
Որպէս փուշ .
Ան զարթած էր քունէն խաղաղ .
Շուրքիս ծիծաղ .
Հեզնա՛մ քաղ .
ԱՆԾԱՆՕԹ(*)
(Եզրպտոս)
(*) Անկա ինչ անձանօթ .
Ն Ա Մ Ա Կ Ա Ր Ա Բ Կ Ի Ր Է Ն
ԱՐԱԲԿԻՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՆՎԱՐ
ԺԱՐԱՆԱՑ Ի ՆՊԱՍՏ ԹԱՏԵՐԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՄԸ

Փաղաքիս Կեդրոնի եւ թաղային
ազգային վարժարաններուն մէջ ուսա-
նող շուրջ 800 երկսեռ աշակերտութեան
դաստիարակութեան ծախք սահմանուած
ներկայ տարեշրջանի պիւտճէն՝ նոր ու-
սուցիչներու անուանումով՝ քաղաքա-
բար անցեալին՝ զգալիորէն բարձրացած
ըլլալով , կրթասիրաց Միութեան Պատ
Գործ . Ժողովը գովելի ձեռնարկը ունե-
ցաւ զայն մեղմելու համար զպրոցակին
տղոցմով սարքել թատերական ներկա-
յացում մը , որը տեղի ունեցաւ բարե-

Ա Շ Խ Ա Տ Ս Ն Ո Ց

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ն ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Օրերայի Հրատարակիմ վրայ , Գրխարայ Պատիմ դիմաց .

Փորագրութեան արուեստի բոլոր ճիւղերը մասնագիտորէն կը կիրարկուին
մեր աշխատանոցին մէջ կատարելալ ճշգրտութեամբ : Առեւտրական գրասե-
նակներու յատուկ այլազան միջոցներ , ինչպէս՝ Տարտոն , պիւնկտորտոն պղինձէ
եւ քառուցուէ քիւպրիսի քարի քիւպրի եւ այլ որոնք մեր տրամադրութեան տակ
կը գտնուին դիւրամատչելի գներով :
Impression en Relief

Կենդանի հիւզարթի ցերեկին դպրոցա-
կան աղջկանց կողմէ արուելիքը կա-
նանց՝ իսկ տղոց կողմէ արուելիքը՝ նոյն
գիշերը արանց համար .
Հինգշաբթի ժամը Թ ին կանանց
թատերական ներկայացումը աւարտելէ
յետոյ , գիշերը ժամը մէկուկէսին սկը-
սաւ արանց ներկայացումը : Ժողովուր-
դի ստուար բազմութեան հետ իրենց
ներկայութեամբ պատուած էին Գայմա-
զամ պէյը , Կաթողիկ Հայոց Առաջնոր-
դը , քաղաքակա՛ն ու զինուորական
բարձրաստիճան պաշտօնեայններ : Թուրք
տրամը աւարտելէն յետոյ , տակաւին
չ'սկսած հայերէն զաւեշտը , դպրոցի զե-
րակատար աշակերտներէն փոքրիկներ՝
պզտիկ զրահուոր նաւի մը շուրջը բո-
լորուած՝ հեր իւրաքանչիւրը իր պար-
տականութեան դերին մէջն էր հրա-
ւէր եղաւ ժողովուրդին իրենց կամուոր
նուէրներով մասնակցելու Ռեզնայի նոր
զրահուորի գնման , որուն ներկայները
յատուկ պատրաստուած սնտուկի մը մէջ
ձգեցին իրենց նուէրները :
Ապա Գայմազամ պէյը , ուրիշ ել-
նելով , գովեց նպատակին ներկայներուն
կողմէ սիրով փարուան ու ընդ առաջ
գայը եւ երկրին յառաջդիմութեան ու
զարգացման միջոցներէն մին ցոյց տը-
ւաւ հայ եւ թուրք տարրի համերաշխ
գործակցութիւնն ու սիրալիր վերաբե-
րութիւնը , յետոյ սկսաւ հայ զաւեշտը
եւ ժամը 8 ին աւարտելով՝ հանդիսա-
կանները մեկնեցան գո՛ւ տպաւորու-
թեան տակ :
Ասով չէր վերջանար սակայն հան-
դէսը , մուտքի տուն գնողներէն շատեր
տեղին անցեալականութեան պատճառաւ
դուրս մնացած ըլլալով եւ նկատելով որ
ժողովուրդէն արտայայտուած բազմանք
ներ՝ վերակրկնում մը նոյն թատերական
ներկայացումին՝ կրնայ իր նպատատար
արդիւնքը ունենալ , Գործ . Ժողովոյ
որոշմամբ շաբթի երկու ժամը մէկին
զարձեալ տրուեցաւ նոյն թատերական
ներկայացումը , առաջինէն աւելի խու-
որն բազմութեան մը ներկայութեան ,
որոց մեջ Գայմազամ պէյի նախօրոք
յայտնած փափաքին համաձայն , մաս-
նաւոր տեղ-գրաւած էր տեղուոյ Ռեզնայի
վարժարանի ուսուցիչներն ու բարձրա-
գոյն դասարանի աշակերտութիւնը :
Այս անգամ ալ ներկայացման ու-
րոշեալ պահուն՝ «Րիշախէ» զրահուորի
մեծադիր պատկերը դրուեցաւ անուրդի,
սակայն ժամանակի սղութեան հետեւան-
քով միայն կէս ժամ տեղի ունեցաւ ա-
նուրդը եւ վերջին քե՛ն՝ մէկ զրուշի յա-
ւելումով պատկերին տիրացաւ հայոց
դպրոցներու աշակերտութիւնը : Ար-
դիւնք գոյացաւ 451 դր :
Տեղի ունեցած այս ներկայացում-
ներէն ի նպատակը , վարժարաննե-
րուն գոյացաւ 5000 դրուշի գումար մը ,
արդիւնք՝ որ կը գերազանցէր իր նա-
խորդ տարինը , ինչ որ կապացուցանէ
ժողովուրդին զէպի իր կրթական յար-
կերն ունեցած կամեցողութեան բարի
տրամադրութիւնը եւ զէպի պաշտօնե-
ութիւն՝ վստահութեան լայն ոգի :

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Անտեղի ազմուկներ բարձրանալ
սկսան Ազգային Օրահին շուրջ , ու-
րուն Հայկական տնտեսը կցուած
չ'ըլլալը՝ քէչ մը աւելի վստահու-
թիւն ներշնչելու պատճառ էր .
Երէկ Յուսարեքին մէջ կարգա-
լով այդ հաստատութեան Հիմնադիր
Տիար Պեքրոս Յովսէփեանի հասցէին
ուղղուած վերաւորանքներ , պէտք
տեսանք իրմէ բացատրութիւն մը
պահանջելու և զարմացանք հաստա-
տելով որ ըստածները ճշմարտու-
թեան բողոքովին հակառակ են : Գոնէ
կ'սպասէինք որ Տիար Մէօթէմէտ-
եան իրաւարանի իր հմտութիւնները
միզմով գործածէր .
Տիար Յովսէփեանին հետ մեր
տեսակցութեան արդիւնքը յաջորդ-
թուով .
ԴԷՊԻ ԿԵՍԱՐԻԱ

Ուրախ ենք ըսելու որ՝ Կեսարիոյ
Թալաս դիւղաքաղաքին մէջ Աշգեան
վարժարանին կից նոր բացուած Ման-
կապարտէզին համար մեր ըրած կոչը
արդիւնաւոր ըլլալ կը խոստանայ , Մաս-
նախումբի մը կազմուելովը , որուն ան-
դամներն են Տիարք Հայկ Ինայէթեան ,
Տօք . Ղազարոս Արթիւնեան եւ Յարա-
թիւն Աշգեան : Պ . Վահան Բոլատեան
Մասնախումբին կողմէ կը ներկայացնէ
նուիրատուները :
ԷՎԷՐԷԿ ԿԵՍԱՐԻՈՅ

Սոյն քաղաքի ազգայիններն ալ ի-
րենց Մեքրոսեան Ուսումնասիրաց ընկե-
րութեան ի նպատակ 500 տոմսեր բաղ-
կացեալ վիճակահանութիւն մը հրապա-
րակ հանած են հետեւեալ հրաւիրատու-
ներով .

- Մեծայարգ Տէր .
Թուրքոյ ժողովուրդեան բաղկացու-
ցիչ տարրերուն մրցակցութիւնը այսօր-
ուան իրականութիւնն է , որ կրնայ
վաղուան վտանգը դառնալ եթէ ազգ-
վին կրթական գործին չ'փարինք եւ
ազգային գոյութեան հարցի տեսակէտով
զայն գիմագրաւել չ'աշխատինք :
«Մեքրոսեան Ուսումնասիրաց Ըն-
կերութիւնն» . որ նպատակ ունի ԷՎԷ-
րէկի Ազգ . Վարժարաններու յառաջդի-
մութեանը մատարել , վերջ յիշուած գո-
վելի գաղափարէն առաջնորդութեամբ վի-
ճակահանութիւն մը սարքած է , որուն
տոմսերէն հատ ներփակելով կը
խնդրէ որ բարեհաճէք ընդունիլ , այն
համարումով թէ՛ «Ով որ կրթութեան
համար կը վճարէ , ազգին փոխ կու-
տայ» :
Հաճեցէք ընդունիլ եւ այլն .
Ի դիմաց ԷՎԷրէկի Մեքրոսեան
Ուսումնասիրաց Ընկերութեան
Դանձապէս Անեմապէս
Կ . Ա.Լ.Պ.Ն.Ն.Ա.Ն Կ . Գ.Ա.Ա.Պ.Ե.Ա.Ն
ՏԵՐՈՒՆԻ

Կիրակի օրը 28 Մարտ 1914 հողին
յանձնուեցաւ քանամեայ ծաղիկ հասա-
կին մէջ Պ . Դանիէլ Մ . Ս . Մելիքեանը .
Պ , Դանիէլ միջակ կրթութիւն ըս-
տացած պատանի մ'էր ապագայ խոստա-
ցող եւ զորը եղաւ . ինչպէս կ'ըսեն . գէշ
մատակարարուած դարմանումներու
Պ . Դանիէլ շատ կարեւոր հարստու-
թեան մը տէրն էր , որը ինչպէս կ'երեւի
իր վրայական վախճանը փութացուց .
Եթէ ան այլապէս ազգին օգտակար
ըլլալու միջոց չ'ունեցաւ գէթ իր պատ-
մութիւնը՝ որ մամլոյ պիտի յանձնուի,
շատ հրահանգիչ դասեր պիտի պարունա-
կէ :

— Այո՛ , ըսաւ սա , նոյն իսկ մեզ
փետտողները ձեռք պիտի կարկառուն մեզ
հանելու համար այն տղուած ճահիճէն ,
որուն մէջ կը տապալակինք անյուսօրէն :
Ապուշ ապուշ երեսս մի նայիք , եւ
մտքերնուտ մէջ սպաւորեցէք սա իրո-
ղութիւնը , որ անցածները պատահեցաւ
աշխարհիս չեմ յիշեր որ կողմը .
«Մարդ մը , զոր՝ եթէ կուզէք՝ Սար-
գիս անուանենք , տարիներով խաղաց ,
չահելով եւ կորսնցնելով : Բայց վերջա-
պէս , հասաւ անխուսափելին , օրին մէ-
կը ստիպուեցաւ ծախել տուն , կահ ու
կազմած , մինչեւ խոհանոցի կարասի-
քը , եւ այս կերպով ձեռք անցուցած
զրամն ալ նետեց խաղատան համայնա-
մարս խառնարանին մէջ : Բարեբաղդա-
բար , Սարգիս միայնակ էր երկրիս վը-
րայ , հետեւաբար պատիւը երթալէն ետ-
քը ծախելու ուրիշ բան մը չտեսաւ
ձեռքին տակ Երբ , ա՛րողջապէս
կործանած , հոյակապ խաղաչէնքին աս-
տիճաններէն վար կիջնէր խելակորոյս ,
խորհելով ապագային վրայ , մտաները
բաճկոնին գրպանին մէջ խօթից մեքե-
նաբար , եւ հոն գտաւ մոռցուած քանի
մը ոսկիներ : Անմիջապէս՝ շարժում մը
ըրաւ իսկոյն ետ դառնալու եւ շար բաղ-
դին հետ պայքարը շարունակելու :
(Շարունակելի) Ա . ՊԱՆԱՆ

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ԳՅՎԱՔԻ ՓՈՂՈՑ ԵՄԻԿԻՆ ՓԱՍՏԱԼ

Վ Ա Ճ Ա Վ Ա Ն Ա Ն Ո Ւ Թ Ի Ն

ԵՂԱՆԱԿԻՆ ԹԱՐՄԱՐԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՈՍ ԵՆ
ՓՈՒԹԱՑԻՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պոլսոյ ամենամանօթ ԹիՐԻՆԿ Տան Գահիրէի

Նորահաստատ Մասնաճիւղն է .

ԲՐԵՏԻ ՏՕՆԱԹԷ ԷԺԻՐԱԿԵՆ
16 Մարտ 1914
1888ինը 362րդ վիճակահանութիւն
Ա. ՊԱՐԻՍԻ
ԹիՐ 16 772 կը շահի 50,000 Տրանգ
Հետեւեալ 25 թիւերը կը շահին 1000 Տր.
6014 120981 194760 280352 327377
25589 129097 205887 284206 341374
68709 164281 236164 300129 341562
77380 166413 253567 315472 376894
81861 184051 279519 321888 395115
Բ. ՍԷՆԻ
131րդ վիճակահանութիւն
Ա. պարգև 515, 361 50,000 Տր.
Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Տր.
411816 460750 566750 648074 785675
422156 494168 578930 661991 760261
432808 506052 599525 684183 765400
451808 539099 613681 692676 775610
459627 549960 622907 711402 789284
Գ. ՍԷՆԻ
40րդ վիճակահանութիւն
Ա. պարգև 124762 կը շահի 100,000 Տր.
ԹիՐ 391, 580 կը շահի 10,000 Տր.
Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Տր.
8600 37872 88766 166050 278016
18664 38907 89436 171091 284026
25587 46689 105695 194309 305552
36014 53187 157558 206184 379640
36816 75424 160998 266461

ՎԻՃԱՎԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂՔԱՍԱԿԵՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

233 ր թիւով

Գահիրէ, 29 Մարտ 1914

Առաջին պարգև

Թիւ	584	Ղրջ	Ողջ	4000
"	6137	"	"	400
"	3558	"	"	200
"	4528	"	"	100
"	12354	"	"	"
"	15180	"	"	"
"	11664	"	"	"
"	11441	"	"	"
"	15765	"	"	"

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 700-
կան զրուշ :

443	641	1082	1139	1234	1666
1689	1919	2917	3604	3761	3874
4548	5505	5683	5819	5873	5965
5991	7143	7397	7881	9058	9610
9669	10053	10304	10393	10666	10741
10782	11077	11566	11808	12089	
12874	13192	13732	13835	14050	

ՓՈՐԱԳՐԻՉ

Ա. ՍԻՆԷՄԵԱՆ

ԶԻՆԳՕԿՐԱՔ

Մուհաննէս Ալի Փողոցիւ վրայ

ՇԱՐՎ ԹՕՐԿՈՒՄԱՆ

ՏՊԱՐԱՆ


Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

ԱՐՇԱԼՈՍՍ Տպարանը՝ Արժօնեայ Եգիպտական Կառավարութեան
Ներքին Գործոց Նախարարութեան, ամենամեծ խնամով կը տպագրէ .

1. — Արժօնեայ Օրաթերթեր, Հանդէսներ, Պոչիտներ, Պարբերա-
կաններ եւ մանաւանդ Գիրքեր .
2. — Վաճառականական տեսքներ՝ եւ գրասենեակի ամեն տեսակ տր-
պագրական պիտոյքներ՝ ամեն շնորհով .
3. — Յայտարարութիւններ, շրջաբերականներ, Ընտանականութիւններ,
Քաղաքիտներ, եւ այլն .
4. — Հարսանեկական տուներ, մանագրներ եւ այլն .

ԱՐՇԱԼՈՍՍ Տպարանին հասցեն է, ց'նոր տեսչութիւն . Շարա
Մուհաննէս Ալի, Սիրասէլ երկարող քրասնիչի գծին վրայ, Հարթ - Էլ
Մասապէլ - Էջ Դասիւն, թիւ 40, Տիար Միհաս Շիրիմեանի յարկա-
քաժմին մէջ .

THE SINGER MANUFACTURING Co



Շարա-Էլ-Մարապի Տավիզ Պրայնի սեփականութեանը մէջ .


Աշխարհի ամենէն շատագոյն կարի մեքենաները Սինգլերներն են եւ ասանցմէ
մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է .

400 Է աւելի վկայական եւ մեքայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստաստեղծութիւն մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ,
ուշագրութիւն դարձնել
իւրաքանչիւր 'եքենայի
վրայ Սինգլի ներկայ
յառկանշիւն

Չրի դասեր և նորոգու-
թիւններ, յաճախորդաց
տուներուն մէջ .

Վճարմանց դերութիւն

Փոխանակութիւն հիներու
նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

Գին 2ԱՔ

ԱՇԽԱՐՀԻ ՅՈՒՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

ՃԱՇՊՐԱՆ ՎԻՊՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՋԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ԱԻԵՏԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ-
րաստուին Եւրոպական եւ Արեւել-
եան ընտիր կերակուրներ . պան-
դուխտ երիտասարդները եթէ ան-
գամ մը այցելեն մեծապէս գոհ
պիտի մնան մատչելի գիներէն և
սպասակութենէն . 14

Ի, Ա, ԵՐԱՆ

Հրատարակութիւններ

ԱՅՈՒՄԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ ԱՄԷՆԻՔՆ ԱԼ

Բառարան հայերեկ-անգլիերեկ սան .	50
Բառարան անգլիերեկ-հայերեկ " .	75
Հայ. անգլ. եւ անգլ. հայ. միասին տպ .	1 -
Պատ. գրուցարարութիւն հայ. անգլ .	150
Գործնական ստորագրութիւն " .	150
Սեռային ստորագրութիւն " .	125
Գործն. եւ սեռ. ստորգ. միասին " .	2 -
Ճողովդրային երգարան " .	2 -
Երգարան եւ սեռ. ստորգ. միասին " .	3 -
Երգ. եւ գործն. ստորգ. միասին " .	3 -

Հասցէ՝ E. A. YERAN
P. O. BOX 84, Sta. A.
Cambridge, Mass.

ՄԵՐ ՀԱՒԱՔԱԾՕՆԵՐԸ

Ոմանք մեզմէ ներկայ չըլանի
Ա. թիւէն սկսեալ հաւաքածօներ
կուզեն . Ասոնք ունենալու համար
պէտք է գիտել ո՛չ թէ Արշալոյսի
տպարանը, այլ Հօթէլ Տ'Արմէնի, ո-
րուն գրանցուած պիտի գոհացը-
նէ զիրենք .

Արշալոյսը ձեռքէ գնել ու-
զողներն ալ կրնան միևնոյն տեղը
գիտել .

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՉԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Շարա Ապտ Էլ Ազիզ
Ապտիի Գարագոյին մօտ .

Ասոնք որ ճաշակաւոր գոսթան մ-
ունենալու համար զանազան տեղեր գի-
մած ու զգոհ մնացած են, թող ան-
գամ մը մեր վաճառատունը այցելեն .
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր-
ուիլ որ՝ եթէ իրենց յանձնարարութիւնը
նը գոհացուցիչ չ'գտնեն, կանխավճարը
ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագ-
ուելու փոփարակներուն համար, նը-
պատաստուր առիթ մը պիտի ըլլայ .

Ապառիկ ապարանքները նկատու-
ղութեան շնորհիւ, եւ ասոնք որ
ինծի կը դիմեն, զիրաւ կրնան ըմբռ-
նել ապառիկին տարբերութիւնները .
Թէ գործի մաքրութեան եւ թէ գի-
նելու մասին . 1-50

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ (Եղիպտոս)

Շարաթական կանոնաւոր երթեւեկ .
Միացեալ Նահանգներու, Քա-
նադայի եւ Հարաւային Ամերիկա-
յի համար .

Գաղթականներու համար չափա-
ւոր գին .

Աչքի քննութիւնը ճիշտապար
կը կատարուի տեղւոյս մէջ .
Մանրաստան տեղեկութեանց
համար դիմել Պորտլանդ քաղաք .
ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ
Հեռագրական Հասցէ — ԼԵՆՕՔՕ

Փոսթ արկի թիւ 897

Թուրքիոյ գաւառներու մէջ

Փոխ - գործակալներ կը փնտրուին

Արժօնեայ Ելիճէ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՍՍ Լրագրոյ